# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

0010, ք.Երևան-10, Մ.Մկրտչյան 5.
Հեռ. 59-72-07. Ֆաքս 52-65-77
Էլ. փոստ: secretariat@mineconomy.am
Վեբ կայք: www.mineconomy.am

Ձեր № 37/37.2/19751-14
25.11.2014թ.

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Եղիազարյան,

Ներկայացվում են «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական

ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մրցակցության բնագավառներում կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին» և մի շարք այլ ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին» և մի շարք այլ ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է ***դրական ազդեցություն***՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները.

- Նախագծով նախատեսվում է արտոնագրային հարկ սահմանել փոքր բիզնեսով զբաղվող ֆիզիկական անձանց համար, ովքեր առանց պետական կամ հարկային հաշվառման կկարողանան իրականացնել իրենց գործունեությունը:
- Առաջարկվում է նաև հանել շրջանառության 9մլն. դրամի շեմը, ինչը արտոնագրային հարկով հարկվող ֆիզիկական անձանց հնարավորություն կտա այլևս չվարել հաշվապահական հաշվառում:
- Նախատեսվում է արտոնագրային վճարներ վճարողների կողմից արտոնագիր տրամադրելու մասին հայտարարությունը հարկային մարմին ներկայացնել էլեկտրոնային եղանակով և նույն եղանակով հարկային մարմնից ստանալ Արտոնագիրը:
- Նախատեսվում է նաև արտոնագրային վճարներ վճարողների համար հանել շահութահարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**Մի շարք օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին», «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ սահմանվում է արտոնագրային հարկ հասկացությունը, կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում արտոնագրային հարկի հաշվարկման և վճարման հետ կապված

հարաբերությունները, սահմանվում է արտոնագրային հարկ վճարողների շրջանակը, արտոնագրային հարկի չափը և վճարման կարգը, նախատեսվում է արտոնագրային վճարներ վճարողների համար հանել շահութահարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորությունը:

Նախագծերով կարգավորվող շրջանակներն առնչվում են արտոնագրային հարկ վճարող ֆիզիկական անձանց կողմից մատուցվող ծառայությունների շուկայի հետ: Նախագծերով փոքր բիզնեսով զբաղվող ֆիզիկական անձիք առանց պետական կամ հարկային հաշվառման կկարողանան իրականացնել իրենց գործունեությունը:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ոչ զգալի դրական ազդեցություն հայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ՍԵՐԳԵՅ ԱՎԵՏԻՍՅԱՆ